

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ԱՌԱՋԻՆ ԳՐԲԻ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Խորենացու հաղորդած տեղեկությունները երկար ժամանակ վստահելի աղբյուրներ են համարվել: Մ. Չամչյանն իր եռահատոր հայոց պատմության 1-ին հատորում նույնիսկ տալիս է, թերևս հիմնվելով Աստվածաշնչի տվյալների հետ հարմարեցված՝ մեղ անհայտ աղբյուրների վրա, Հայկի և նրա հաջորդների ժամանակագրական բաշխումը: Մոտավորապես XIX դարի կեսերից սկսվում է Խորենացու բանասիրական խիստ քննադատությունը, որ առանձին դեպքերում վերածվում է ծայրահեղ ժխտողական վերաբերմունքի: Ոչ միայն տեղաշարժի է ենթարկվում Խորենացու ապրած ժամանակը, այլև կասկածի տակ է առնվում նրա արժանահավատությունն ընդհանրապես՝ ընդհուպ մինչև պատմության կեղծարար հայտարարվելը: Միայն 1940-ական թթ. Ստ. Մալխասյանցի, Մ. Աբեղյանի և ուրիշների ջանքերով տեղի է ունենում Խորենացու հեղինակության վերականգնումը, նրա արդարամիտ և անկողմնակալ գնահատումը՝ առանց չափազանցությունների, առանց գերագնահատման ու թերազնահատման¹: Խորենացու ժառանգության գնահատման աշխատանքը շարունակվում է նաև մեր օրերում²:

Խորենացուն ճիշտ գնահատելու համար պետք է նկատի առնել, որ նա իր ժամանակի զավակն է՝ այդ ժամանակին հատուկ գիտելիքների ծավալով և նախապաշարումներով: Խորենացին դիտումնավոր կեղծիք չի կատարում և չէր կարող կատարել. ամեն մի շեղում և հարմարեցում հիմք ունի ժամանակի՝ պատմության նկատմամբ եղած վերաբերմունքը, կիրառվող մեթոդները, եղած աղբյուրները: Հեշտ է, իհարկե, այժմյան գիտելիքների և պատկերացումների լուսի տակ քննադատել Խորենացուն. ավելի դժվար է նրան հասկանալ և բացատրել:

Ներկա հոգվածում հեղինակը նպատակ է դրել քննարկելու մի մասնավոր հարց՝ ցույց տալ Խորենացու վաղ արքայանունների (հատկապես Հայկի և նրա հաջորդների անունների) լեզվական համակարգը և աղբյուրները: Այն բանից

¹ Հմմտ. Ստ. Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940: Նույնի՝ Ներածություն, Ժանոթություններ և հավելված Մ. Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության, Երևան, 1940: Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1944, էջ 249—291:

² Տե՛ս հատկապես Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965: Նույնի՝ Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966: Խորենացու արքայացանկերի հիման վրա վերջերս փորձել են նոր եղրակացություններ անել հայ ժողովրդի վաղ պատմության վերաբերյալ Վ. Խաչատրյանը (ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1980, № 6, էջ 101—112) և Ա. Մնացականյանը (նույն տեղում, 1981, № 2, էջ 74—87):

հետո, երբ կասկածի տակ է առնվել Խորենացու արքայացանկերի պատմական հավաստիությունը, դրանք համեմատաբար քիչ են ուշադրություն գրավել: Երբեմն-երբեմն միայն նշվել են լեզվական առանձին գուգահեռներ, բերվել պատմական հնարավոր աղբյուրներ և ավանդություններ: Խորենացու արքայանունները լեզվաբանական առումով քննարկվել են Ֆ. Յուստիի՝ իրանական և Հ. Աճառյանի՝ հայկական անձնանուններին նվիրված աշխատությունների մեջ³, բայց դրանց տվյալները չեն համակարգվել և հիմք չեն տվել որոշակի եզրակացությունների համար:

Ինչպես հայտնի է, Խորենացին իր պատմության առաջին գրքում փորձում է տալ «հայոց մեծերի ծննդաբանությունը»՝ մասամբ բավարարվելով միայն թվարկումով, մասամբ տալով զանազան տեղեկություններ: Հենվելով Աստվածաշնչի վրա՝ Խորենացին այդ ծննդաբանությունը սկսում է Նոյի որդի Հաբեթից և փորձում է «հայոց մեծերի» թիվը հարմարեցնել Ասորեստանի թագավորներին՝ Աբյուդենոսի կողմից տրված թվին: Իր պատմության առաջին գրքում նա թվարկում է հաջորդաբար 50 հոգու:

- | | |
|--------------------------|------------------------|
| 1. Յաբեթ | 23. Ամսակ |
| 2. Գամեր (Գամիր) | 24. Առնակ |
| 3. Թիրաս | 25. Շաւարշ |
| 4. Թորգոմ | 26. Նորայր |
| 5. Հայկ | 27. Վստամ ⁴ |
| 6. Արամանեակ | 28. Կար |
| 7. Արամայիս | 29. Գոռակ |
| 8. Ամասիայ | 30. Հրանտ |
| 9. Գեղամ | 31. Ընձակ |
| 10. Հարմայ | 32. Գղակ |
| 11. Արամ | 33. Հաւրոյ |
| 12. Արայ Գեղեցիկ | 34. Զարմայր |
| 13. Արայեան Արա (Կարդոս) | 35. Պերճ |
| 14. Անուշաւան | 36. Արբուն |
| 15. Պարէտ | 37. Բազուկ |
| 16. Արբակ | 38. Հոյ |
| 17. Զաւան | 39. Յուսակ |
| 18. Փառնակ | 40. Կայսակ |
| 19. Սուր | 41. Սկայորդի |
| 20. Հաւանակ | 42. Պարոյր |
| 21. Վաշտակ | 43. Հրաշեայ |
| 22. Հայկակ | 44. Փառնաւալ |

³ F. Justi, *Iranisches Namenbuch*, Marburg, 1895, 2-րդ հրատ. 1963): Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 1—5, Երևան, 1942—1962: Սրանց վերնագրերը հետազայում տրվելու են հապավված ձևով՝ IN և ՀԱՆԲ:

⁴ Վստամ-ը և հաջորդող Կար-ը ձեռագրերում մասամբ գրված են միացած՝ իբրև մեկ անուն (Վստամկար), մասամբ որպես տարբեր անուններ: Մենք, հետևելով Ս. Մալխասյանցին (Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն Ա Մ Գ Ի, Հայոց պատմություն, էջ 270, ծան. 68), բերել ենք որպես առանձին անուններ:

45. Պաճոյճ

46. Կոռնակ

47. Փառոս

48. Միւս Հայկակ

49. Երուանդ սակաւակեաց

50. Տիգրան

«Հայոց մեծերի» անվանացանկը ակնհայտորեն բաժանվում է երեք անհավասար հատվածի:

Առաջին հատվածը պարունակում է 1—4 թվահամարների անունները և հենվում է Հին կտակարանի ու նրա մեկնիչների տվյալների վրա: Սրանցից Գամբը-ը (Գամիր), որ Աստվածաշնչում հանդիպում է Gomer և Gamer ձևերով, համարվում է կիմերների անվան արտացոլումը և հանդես է գալիս նաև Կապադովկիայի հայերեն Գամիր անվան մեջ⁵:

Աստվածաշնչում Թիրասը համարվում է Հաբեթի որդիներից կրտսերը, Թորգոմը՝ Գամբի որդին (Մկ. 7, 1—3), բայց հորենացին, ինչպես նշում են, Հայկի և Բելի (Նեբրովթի) ժամանակը մերձեցնելու նպատակով ներմուծել է Թիրասին այդ երկուսի միջև և հավասարացրել Հաբեթի և Քամի հաջորդների շարքերը⁶: Սա նշում է և ինքը հորենացին. «Արդ զԿայինաւ շորորդ է ի Նոյէ ամենայնք ի ժամանակագրացն գրեն և ի Սեմայ երրորդ: Նոյնպէս և զԹիրաս՝ շորորդ է ի Նոյէ, իսկ ի Յաբեթայ երրորդ. թէպէտ և ըստ մերում թարգմանութեանս ոչ ուրեք ի բնագրի գտանի»⁷: Հովհաննես Դրասխանակերտցին իր պատմության մեջ Թիրասին համարում է թրակացիների նախահայրը⁸: Լեոն և Ժ. Մորգանը⁹ սա համարում են հայ-թրակյան հնագույն կապերի մասին հայերի պահպանած հիշողության արտացոլում, բայց Հ. Մանանդյանը հակված է կարծելու, որ Հովհաննես կաթողիկոսի տեղեկությունը հիմնված է «ոչ թե ժողովրդական ավանդության, այլ, հավանորեն, Հին կտակարանի մեկնիչների վկայությունների վրա»¹⁰: Նույնիսկ հնարավոր է, որ սա լինի իր իսկ Հովհաննես Դրասխանակերտցու մտահղացումը՝ հենված Թիրաս և թրակ- (հուն. τράκ) «թրակացի» անունների նմանության վրա:

Թորգոմի անունը գալիս է հուն. Θοργαμάδης (ուելի նաև Θοργαμά, Θοργαμά տարբերակները), որն իր հերթին ծագում է եբր. Thorgama-ից (Thogarma): Ըստ Կիպիտի՝ Thogarma-ն համապատասխանում է սեպագիր արձանագրությունների Til-Garimu վայրին, որ գտնվել է մերձեկրատյան շրջանում: Հին կտակարանի օրհնած Պորգա-ն հայերեն թարգմանվել է Տում Թորգոմայ, այսինքն՝ ուղիղ ձևն ըմբռնվել է որպես սեռական: Ավելորդ է նշել, որ Հին կտակարանում Գամբին հատկացվում է 3 որդի՝ Ասքանազ (եբր. Askanaz), Բիփադ (Հոփիաթ) և Թորգոմ, որոնցից առաջինը անձնավորում է սկյութներին (սեպագիր արձանագրություններին Ašgūza),

⁵ Հմմտ. Գ. Բ. Զահուկյան, Կիմերների և կիմերների պրոբլեմը արդի գիտության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 4, էջ 75—76:

⁶ Մ. հորենացի, Հայոց պատմություն, էջ 260—261, ծան. 18 (Ստ. Մալխասյանց):

⁷ «Ստվարի» հորենացու Պատմություն Հայոց», Տիֆլիս, 1913, էջ 19:

⁸ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 33:

⁹ Լեոն, Հայոց պատմություն, Ա, Թիֆլիս, 1917, էջ 331: J. Morgan, Histoire du peuple arménien, Nancy—Paris, Strasbourg, 1919, p. 37.

¹⁰ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ա, Երևան, 1944, էջ 16:

երկրորդը՝ պափլագոնացիներին, երրորդը (Թորգոմը)՝ Թերևս հայերին¹¹։ համենայն դեպս, հայ պատմիչներից Փավստոս Բուզանդը և Ագաթանգեղոսը «տունն Թորգոմայ», «ազն Թորգոմայ», «որդիքն Թորգոմայ» ասելով հասկանում են հայերին։ Կորյունը այս նույն իմաստով գործածում է «Ասքանազեան ազգն» արտահայտությունը։

Հին կտակարանից եկող անունների քննությունը ցույց է տալիս հների մտածողության մի բնորոշ գիծը՝ անձնանունները այստեղ շատ դեպքերում անձնավորում են ժողովուրդները (հանդես են գալիս որպես էպոնիմներ), և զարմանալի չէ, եթե Խորենացին նույն եղանակով Հայկի և Արամի մեջ անձնավորում է հայ-արմեններին։ Միաժամանակ Խորենացին ևս լայնորեն օգտվում է Հին կտակարանում և ընդհանրապես հին հեղինակների մոտ տարածված մեթոդից՝ հատուկ անունների ստուգաբանությունից. նա փորձում է անձնանունների միջոցով ստուգաբանել տեղանուններն ու ցեղանունները, կապ ստեղծել անձնանունների և ցեղանունների միջև, երկրորդները բխեցնել առաջիններից։ Այս կապակցությամբ լիովին հասկանալի է Խորենացու միտումը հայերի, հայ նախարարական տների, հայկական տեղանունների մեկնաբանության համար իր օգտագործած աղբյուրներից ընտրել իր նպատակին հարմար անձնանուններ։

Վերը ասվածից պարզ է դառնում ցանկի երկրորդ հատվածի բնույթը. այն ընդգրկում է 5—13-րդ անունները և ակնհայտորեն նպատակ ունի մեկնաբանել ու ստուգաբանել հայերի նայ ինքնանվանումն ու օտարների տված աղմեկն անվանումը։ Մենք հակված ենք ընդունելու, որ Խորենացին այդ անունները ոչ թե հորինել է, ինչպես կարծում են որոշ քննադատներ, այլ վերցրել գերազանցապես ժողովրդական ավանդություններից և օտար աղբյուրներից։

Հայկ անունը, որ հայերի էպոնիմն է, անկասկած, քաղված է հայկական ժողովրդական ավանդություններից և առասպելներից¹²։ Այդ մասին նշում են ինչպես Խորենացին, այնպես էլ Սեբեոսն ու Անանիա Շիրակացին։ Վերջինս նույնիսկ փորձում է հայկական ամսանունները կապել Հայկի զավակների անունների հետ. «...զոր առեալ հայոց զանունս ուստերաց և դստերաց նորա՝ եղին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հօրն և զաւակացն. և են այսոքիկ նաւասարդ, Հոռի, Սահմի և Մահեկի, Արեգ և Մարերի, դստերք էին Հայկին։ Տրէ, Բաղաց, Արաց և Հրոտից որդիք էին Հայկին։ Իսկ Մարգաց և Հարաւանց, զոր այժմ Ահկի կոչեն, այս ի գործոց անուանեցան, զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սոքա»¹³։ Որ Հայկի առասպելը շատ հին է և գալիս է որսորդության տիրապետության շրջանից, երևում է նրանից, որ նախ՝ Աստվածաշնչի հունական թարգմանության Օրիոնը (Պոսեյդոնի որդին՝ հայտնի որպես քաջ որսորդ) հայերեն փոխարինված է Հայկով (Օրիոնի համաստեղություն—Հայկը համաստեղություն), երկրորդ՝ Սեբեոսի գրքում Բելը Հայկին դիմում է որպես որսորդի. «Եկ ի ձեռս իմ և կեաց ի տան իմում խաղաղու-

¹¹ Հմմտ. Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 46, ծան. Հ. Աճառյան, ՀԱՆԻ, 2, էջ 343—344։

¹² Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 176—258, 581—590։ Նույնի՝ Հայոց հին գրականության պատմություն, 1, Երևան, 1944, էջ 19—23։

¹³ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 76։

թեամբ, ունելով ի գործս զմանուկս ի տան իմոյ զորսականս»¹⁴։ Եթե հայ անունը իրոք կապված է Հայաստյի անվան հետ, ապա անհնար չէ, որ Հայկի առասպելը ակունքներ ունենա Հայաստյի ժամանակներում։

Առասպելական ծագում ունեն նաև Արամի և Արա Գեղեցիկի անունները, որոնցից առաջինից հորենացին բխեցնում է օտարների կողմից հայերին տրվող արմեն անունը և հայերի համար օգտագործում արքա արամեանք, արամեան ազն արտահայտությունները։ Հետազոտողները հակված են Արամ անվան մեջ տեսնելու ուրարտական Արամ (ասորեստանյան Aramu) թագավորի անվան հիշողությունը՝ խառնված պատմական այլ դեպքերի հիշողության հետ։ Օգտվելով «Իլիականում» հիշատակվող արիմների և արմեն անվան Յ. Մարքվարտի կողմից կատարված նույնացումից՝ Մ. Աբելյանը նույնիսկ կարծում է, որ «արիմ անունը դարձել է Արամ, թերևս ուրարտացոց Արամ թագավորի անվան հիշողությամբ կամ, հավանորեն, ազդեցությամբ Աստվածաշնչի մեջ հիշված «Արամ» անվան, որ է՝ արամեացոց—Ասորիքի և Միջագետքի բնակիչների նախնին»¹⁵։ արիմների բնակատեղին է համարվում Արգայոս հրաբխային լեռան շրջանը՝ Կեսարիայից հարավ, որտեղ և հայերը պետք է յուրացրած լինեին Արամի՝ Պայապիս Քաղեայ Տիտանյանի հետ կոպելու և հաղթելու առասպելը։ Հետաքրքրական է նշել փոքրասիական (պիսիդա-լիկիական) համահունչ Αραμοσ անվան գոյությունը¹⁶։ Պատահական պետք է համարել հորենացու Արամ-ի նմանությունը իրան. Aram (aram «հանգիստ») անվան հետ։

Ամենայն հավանականությամբ արմեն անվան հետ կապված փոփոխակներ են նաև Արամանեակ (Արմենակ), Արամայիս (Արմայիս) և, թերևս, Հարմա անունները, սակայն ոչ թե «հնարած» հորենացու կողմից¹⁷, այլ կազմված սովորական ձևով՝ Արամ-ից (Արամ→Արամեան→Արամենակ>Արմենակ), կամ առնված առասպելներից ու այլ աղբյուրներից։ Պատահական չէ, որ Սեբեոսը և, ավելի ուշ, Շնորհալին, ի տարբերություն հորենացու, արմենների անունը բխեցնում են ոչ թե Արամի, այլ Արամանյակի անունից (Արամանեակ, Արամենեակ, Արմանեակ, Արմենեակ, Արմենակ, Արմենեկ տարբերակներով)։ Եթե Արամ անունն իրոք գալիս է ուրարտական Aram(u)-ի անունից, որ եղել է Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի (860—825) ժամանակակիցը և հիշատակված է ասորական աղբյուրներում 860, 858 և 846 թթ.¹⁸, ապա անհնար չէ Արամանյակի անունն էլ կապել ուրարտական մի այլ թագավորի՝ Erimena-ի (625—605) անվան հետ։ այս անունը, որի առաջին մասը նման է Մարկվարտի կողմից մատնանշված՝ «Իլիականի» արիմ ցեղանվանը, կարող էր ոչ թե հատուկ անուն լինել, այլ հասարակ անուն, որ ցույց է տալիս ուրարտական վերջին թագավոր Ռուսայի հոր հայկական ծագումը¹⁹։ Ուրարտում բնակվող հայերի թիվը մ. թ. ա. VII դարում պետք է այնքան շատ լիներ, որ նրանք կարողանային գահի վրա նստեցնել իրենց

¹⁴ «Սերէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 4։

¹⁵ Մ. Աբելյան, Հայոց հին գրականության պատմություն, 1, էջ 25։

¹⁶ L. Z g u s t a, Kleinasiatiscche Personennamen, Prag, 1964.

¹⁷ Հմմտ., օրինակ, Հ. Աճառյան, ՀԱՆԲ, 1, էջ 288։

¹⁸ Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 41.

¹⁹ Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 225։

ներկայացուցին: Այս կապակցությամբ նշենք արմեն անվան հետ կապված մի քանի հայտնի փաստ. 1) Ստրաբոնը (IX գիրք, IV գլ., § 8) արգոնավորդներից Յասոնի ուղեկից Արմենին համարում է Արմենիոն քաղաքից և նրա անունից է բխեցնում Արմենիա անունը, թեև Ստեփան Բյուզանդացին Արմենին համարում է Հռոդոսից²⁰. 2) Ժագումով պարսիկ Ֆիրուզաբադին (XIV դար) իր «Կամուս» («Ուլկիանոս») կոչված արաբական բառարանի՝ մեզ հասած համառոտ տարբերակում հայերի նախահայրն է համարում Արմանին (Arman), որին համարում է Laylī-ի, սրան էլ՝ Yūnan-ի որդին²¹. պատահական պետք է համարել նմանությունը իրան. Armin և Armini անձնանունների հետ²². 3) Հիշեցնենք, որ Աստվածաշնչից երեմիա Մարգարեի խոսքերը (գիրք Ա, գլուխ 7) Բաբելոնի դեմ «Արաշատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին» պատվեր տալու վերաբերյալ, որոնք բերում է Մովսես խոռենացին, եբրայական բնագրում ունեն «զթագաւորութիւնս Արարատայ, Միննեայ և Ասքենազայ» և ասորականում՝ «զթագաւորութիւնս Արարատայ, Արմինայ և Ասքենազայ» ձևը²³. այստեղ Միննի-ն, որ Ուրմիա լճի մերձակա Մաննա երկիրն է, փոխարինված է Արմինա-ով. 4) Փոքր Ասիայում (Կիլիկիայում) հանդիպում է Արմ[α]ււտի իգական անձնանունը, որ կարող է տեղական անվան ('Արմεւաւի?) հունականացված ձև լինել. համատիպ մի անվան արական ձևը կարող էր գրավել Խորհնացու ուշագրությունը. այս անվանը որոշ կասկածով միացվում են արևելափոյուղ. Αρμεւα և պիսիդ. Αρμαεα անձնանունները²⁴. 5) պատմաբանները արմեն անունը կապում են սեպագիր արձանագրությունների Urme և Arme անունների հետ²⁵:

Արամայիս (Արմայիս, Արմաիս) անունը ակնհայտորեն նմանահունչ է Արամ-ին: Սրա համար Խորհնացին հիմք կարող էր ընդունել մի կողմից՝ Արմաիս քաղաքի անունը, որը նա բխեցնում է Արամայիսի անունից, մյուս կողմից՝ թերևս համապատասխան փոքրասիական անունը՝ առնված որևէ աղբյուրից. հմմտ. լիկիական Αρμαւ արական անձնանունը²⁶. հմմտ. նաև լիդ. Αρμῆς անձնանունը, որ հնչյունապես մոտ է Արմաիս քաղաքանվանը:

Համապատասխան 'Արμα-ով անձնանուններից կարող էր առնված լինել նաև Հարմա-ն, որ դժվար թե կապ ունի փոքրասիական (խեթալուական) լուսնի և լուսնաստծու անվան հետ. խեթ., լուվ. arma-, հիեր. Arma-, լիկ. Αρμ-, Երբ-, Արμα- բաղադրիչներով հայտնի են մեծ թվով փոքրասիական (հատկապես լիկիական, լիդիական, պիսիդական, կիլիկյան) անձնանուններ²⁷:

²⁰ Հմմտ. В. В. Пиготовский, նշվ. աշխ., էջ 123:

²¹ Հմմտ. Հ. Աճառյան, ՀԱՅԲ, 1, էջ 289:

²² F. Justi, IN, S. 27.

²³ Հմմտ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 11:

²⁴ L. Zgusta, նշվ. աշխ., էջ 95:

²⁵ Հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», I, Երևան, 1971, էջ 237 և հջ. (այս հատվածի հեղինակն է Ս. Նրեմյանը):

²⁶ L. Zgusta, նշվ. աշխ., էջ 94:

²⁷ Նույն տեղում, էջ 92—95:

Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը մի կողմից հիմնվում է Առաջավոր Ասիայի ժողովուրդների մեջ տարածված դիցական պատկերացումների վրա (Արան որպես մեռնող ու հարություն առնող աստված և Շամիրամը՝ որպես սիրո աստվածուհու կերպարի մարմնացում), մյուս կողմից՝ պարունակում է Ուրարտուի՝ Ասորեստանի դեմ մղած դարավոր պայքարի արձագանքները²⁸։ Պլատոնը հիշում է մի պամփիլիացի հայի՝ «'Η(ος) անունով՝ Ἀρμένιος-ի որդին, որ մեռել և հարություն է առել։ Արա-ին մոտ են հնչում թրակյան Ἀρεός, Ἀριγς պատերազմի աստծու և մականդ. Ἀράς պատերազմի ու որսորդության աստծու անունները, թեև առկա է ակնհայտ գործառական տարբերություն։ Բիթլունիայում հուլիս ամիսը կոչվում էր Ἀρειος, այսինքն՝ Ἀργς աստծուն նվիրված՝ «արեսական»։ այս առումով հմմտ. արաց «հայոց տոմարի Ծ-րդ ամսանունը», որ թերևս կապված է Արայի անվան հետ²⁹։ Թրակյան անունը հնդեվրոպական ծագում ունի՝ *er- «շարժ(վ)ել. հուզել. բարձրացնել», որտեղից՝ հայ. արմ(ն), զարմ, արմատ, որեար, թերևս նաև արմեն (—հուն. ὀρμενος՝ դերբայ ὀρνυμι-ից, Գերմ. ermana- «մեծ»)։ *Ormenos նախաձևը շատ լավ բացատրում է Urme և Arme տարբերակները (*o- > a- անցման շրջանի տատանում), եթե դրանք իրոք կապված են արմեն-ի հետ։

Մնացած անուններից Ամասիա-ն թերևս իրոք առնված է Աստվածաշնչային եբր. Amasyah > հուն. Ἀμασιας անձնանունից՝ Մասիա լեռան անունը ստուգաբանելու նպատակով³⁰, թեև կան նաև փոքրասիական և թրակյան զուգահեռներ. այսպես, հայտնի է թրակյան Արասաիս իգական անձնանունը։ Հավանաբար Ամասիա-ն որևէ կապ չունի պոնտական Ամասիա քաղաքի անվան, հիեր. խեթ. hamasaš «թուռ» բառի, այլև ակկադ. Amaziša անձնանվան հետ³¹։

Վերջապես, Գեղամ անունը հորենացու կողմից տրված է Գեղարֆունի և Գեղամայ ծով տեղանունների մեկնաբանության համար. սրանցից առաջինը, ինչպես հայտնի է, ծագում է ուրարտ. Uelikuni (Uelikuḫi) տեղանունից³² և ձևափոխություն է կրել հայկական ժողովրդական ստուգաբանության մեջ՝ իբրև Գեղ+արֆունի։ Եթե Գեղամայ ծով տարբերակը իրոք գոյություն է ունեցել ժողովրդի մեջ և ոչ թե հորենացուն է պատկանում, ապա թերևս Գեղամ հատուկ անունն ընդհանրապես ուրարտական ծագում ունի։ Այն կարող է կապված լինել «ueli» ջոկատ (?)» բառի հետ։ Պակաս հավանական է

²⁸ Հմմտ. Մ. Աբելյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Գերկեսո դիցուհու արձաններ, Երևան, 1941։ Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944։

²⁹ Գ. Բ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 68, 72։ Պատահական է արդյոք նմանությունը ուրարտ. Arasa դիցանվան հետ։

³⁰ Հմմտ. Հ. Աճառյան, ՀԱՆԲ, 1, էջ 114։

³¹ Վերջինիս համար հմմտ. K. Riemenschneider, Lehrbuch des Akkadischen, Leipzig, 1973, S. 280.

³² Հմմտ. Г. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940, стр. 22. Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, стр. 444.

բառի հնդեվրոպական ծագումը (*ueləma > Գեղամ, -այ. հմմտ. հայ. գեղ, գեղանի < և. -ե. *uel-):

Արա Գեղեցիկի որդու երկրորդ՝ Կարդոս անունը Հ. Աճառյանը հակված է համարելու ասորական՝ նկատի ունենալով Կարդոն անունը (Անտիոքի եպիսկոպոսի)³³, Ըստ խորենացու՝ Կարդոսը Արա է կոչվել Շամիրամի կողմից: Անհնար չէ ենթադրել Կարդոս անվան սեմական այլ՝ ասորական ծագում³⁴. հմմտ. ակկադ. qardu «ուժեղ, հզոր, քաջ» (աստվածների և թագավորների մականի), թեև հնարավոր է նաև այլ մեկնություն (հմմտ. հունական աղբյուրների Καρδούχοι ցեղանունը, որ նույնացնում են հետագա քրդերի անվան հետ. սրա հետ նույնն է հայ. Կորդուխ-ը):

խորենացին տալիս է նաև կողմնակի գծով սերված այլ անձերի անուններ՝ նրանցով ստուգաբանելով նախարարական զանազան տոհմանուններ և տեղանուններ: Սակայն եթե ուղիղ գծով հաջորդների անունների մեջ չկան ակնհայտորեն բուն հայերենով ստուգաբանվող և իրանական ծագում ունեցող անձնանուններ, ապա այս դեպքում դրանք առկա են. այսպես, հայերենով ստուգաբանելի են Ամասիայի որդիներից Յուլակի (< ջուլ + ակ, հմմտ. Փայլակ) և թերևս Գեղամի թոռ Գառնիկի (գառն + իկ. հմմտ. Գառնուկ) անունները. նշենք, որ Գառնիկի անունից է խորենացին բխեցնում Գառնի բերդանունը, որ ամենայն հավանականությամբ ուրարտական ծագում ունի (garini «բերդ, ամրոց»)³⁵. այս դեպքում հայկական անունը երկրորդական բնույթ պետք է ունենա՝ թերևս հարմարեցված Գառնի-ի անունից, որ վերջին հաշվով ուրարտական ծագում ունի: Իրանական ծագում ունեն Հայկի որդի Մանավազի (Manabazu- < Mana + bāzu- «ձեռք, բազուկ»), Ամասիայի որդիներից Փառուխի (Farrux < farrux «բազանիկ, փառավոր») և Արամայիսի թոռ Երաստի (Արաստի՝ Rasta- < rasta- «ուղիղ, ճշմարիտ»)³⁶, թերևս նաև Մանավազի որդի Բազի (Bazē. հմմտ. հայ. բազե, որ իրանական փոխառություն է) և Հայկի որդիներից մեկի՝ Խոռի (հմմտ. Xurrah 'x'arr /h'arr որ farna- «երջանկություն, փառավորություն, պերճություն» բառի տարբերակն է) անունները: Սակայն վերջին երկուսի համար հնարավոր է ենթադրել նաև այլ ծագում. Խոռ-ը, որից խորենացին բխեցնում է Խոռխոռունի տոհմանունը, կարող է կապված լինել խուռիների (hurrī) անվան հետ, ինչպես Խոռ «ժլատ» բառը: Հետաքրքրական է նշել, որ եթե խորենացին Բզնունի տոհմանունը բխեցնում է բազ-ից, ապա ն. Ադոնցը Բաժունի տոհմանունն է կապում Զուլամերիկից հարավ ընկած և Բազ կոչված լեռնագավառի անվան հետ. այստեղ բնակվել է ասորական հինգ ցեղերից մեկը՝ նույնպես Բազ անունով: Բաժունի-ն Բզնունի-ի աղդեցությամբ ձևափոխվել է Բժնունի-ի³⁷:

³³ Հ. Աճառյան, ՀԱՆՐ, 2, էջ 613:

³⁴ F. Delitsch, Assyrisches Handwörterbuch, Leipzig, S. 503-594.

³⁵ Գ. Բ. Զահուկյան, Ստուգաբանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 96:

³⁶ Երաստ անունը Հ. Աճառյան անձնանունների բառարանում (ՀԱՆՐ, 1, էջ 269) բերում է Արաստ ձևով՝ ծագած համարելով Arāšī անձնանունից՝ gad- «պատրաստել» արմատից. Բ/Ա տառանումը վկայում է սկզբնաղբյուրի՝ Դ-ով սկսվելու մասին:

³⁷ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 312, прим.

Հ. Աճառյանը կասկածելի է համարում Արամայիսի որդի Շարայի անվան բխեցումը պրսկ. Šara «շատակեր» բառից (հմմտ. հորենացի՝ «զՇարայ, զյուրվածին և շատակեր»)՝³⁸, որի հին ձևը պետք է Šarak լիներ:

Հայկի թոռան՝ Կադմոսի անունը հորենացին կապում է Կադմեանք նախարարական տոհմի անվան հետ (վերջինս բխեցնում է նրանից)՝ թերևս նկատի ունենալով նաև Թեբեի առասպելական հիմնադիր Կադմոսի անունը: Սա փյունիկյան թագավոր Ադենորի որդին է համարվում, և, հետևաբար, անունը պետք է սեմական ծագում ունենա: Ն. Ադոնցը և Յ. Մարկվարտը հայկական Կադմոս անունը բխեցնում են ասոր. kadum «առաջին» բառից³⁹, որ վիճարկում է Հ. Մանանդյանը⁴⁰, Հ. Աճառյանը նույնպես Կադմոս-ը համարում է ասորերենից փոխ առնված՝ իբրև ապացույց բերելով արաբ. qudmus «վաղեմի և մեծանուն թագավոր» բառը⁴¹: Հետաքրքրական է նշել, որ հույն բառարանագիր Հեսիքրիոսը տալիս է καδμος բառի երեք իմաստ՝ «նիզակ», «բլուր» և «վահան»⁴²:

Կադմոս անվան հարցը լուծելիս պետք է նկատի առնել երկու հնարավոր տարբերակ. 1) մի կողմից՝ այն նման է սեպագիր արձանագրությունների մեջ հիշված Kadmuš Երկրի անվանը⁴³. այդ երկիրը պետք է խուռական բնակչություն ունեցած լինի, և, հետևաբար, եթե նմանությունը պատահական չէ, ապա Կադմեանք նախարարական տոհմը խուռական ծագում է ունեցել. այս դեպքում հուն. Καδμος-ի և հայ. Կադմոս-ի զուգադրիությունը պատահական պետք է համարել, թեև, անշուշտ, հորենացին հուն. ձևը նկատի է առել. 2) մյուս կողմից՝ այն նման է հայաս. Qadmasa (Qadkusa) քաղաքանվանը և թրակ. Καδμιλος (Καδμιλος=Κάσμιλος, Κασμελιος, Κάσμιλος) դիցանվանը. վերջինիցս է Դ. Դեչևը բխեցնում Καδμος անձնանունը և միաժամանակ նշում, որ δ/σ փոխանցումը կապված է հ.-ե. *g'-ի երկակի s և d արտացոլումների հետ⁴⁴, այս կապակցությամբ հետաքրքրական է հայաս. մի այլ քաղաքանվան Kašmlaha-ի Qadmaša-ի հետ ունեցած նմանությունը. եթե նմանությունը պատահական չէ, ապա Կադմոս անունը կարող է զալ Հայաստանի կազմում նշանակալից (եթե ոչ առաջնակարգ) տեղ ունեցած թրակյան տարրից⁴⁵: Անընդունելի է Կադմոս-ը երբ. qadain «շտապել, դիմավորել, նախազգուշացնել» բայից բխեցնելու փորձը⁴⁶:

³⁸ Հ. Աճառյան, ՀԱՅԲ, 4, էջ 150:

³⁹ Н. Лонц, *Изд. жур.*, էջ 418. J. Markwart, *Äthiopien und die Tigrisquellen*, Wien, 1930, S. 218—219.

⁴⁰ Я. Манандян, О некоторых спорных проблемах истории древней Армении, Ереван, 1956, стр. 153.

⁴¹ Հ. Աճառյան, ՀԱՅԲ, 2, էջ 574:

⁴² „Hesychii Alexandrini Lexicon“.

⁴³ Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն, էջ 33: «Հայ ժողովրդի պատմություն», I, էջ 333:

⁴⁴ D. Detschew. *Die thrakischen Sprachreste*, Wien, 1957, S. 234—235.

⁴⁵ Գ. Բ. Զահուկյան, Հայաստանի լեզվի հինանատոլիական ծագման վարկածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 102:

⁴⁶ Կ. Բասմաջյան, Իսկական պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1914, էջ 69:

Խորենացու ցուցակի երրորդ և ամենաընդարձակ հատվածի անձնանունների գերակշռող մասը իրանական ծագում ունի։ Սա զարմանալի չի լինի, եթե նկատի ունենանք, որ պատմական ավելի հավաստի աղբյուրներով էլ մեզ հասած անձնանունները նույնպես գերազանցապես իրանական բնույթի են։ Եթե սրան ավելացնենք, որ բուն Հայաստանի իշխողների հետ ավանդույթները խառնել է իրանական ծագում ունեցող այնպիսի ժողովուրդների իշխողների, ինչպիսիք են սկյութները ու, թերևս, կիմերները և որ V դարում մեծ կշիռ ունեին իրանական անձնանունները, ապա սլարզ կլինի Խորենացու ցանկի մեջ իրանական անձնանունների գերակշռությունը։ Հարկավոր է նկատի առնել նաև այն, որ նախ՝ Խորենացու ժամանակներում իրանական ծագում ունեցող անձնանունները հնչում էին (և մեր օրերում էլ դեռ շատ դեպքերում հնչում են) որպես բուն հայկական և երկրորդ՝ հունական ու ասորական աղբյուրներում հանդիպող իրանական ծագման անձնանունները Խորենացին հեշտությամբ կարող էր մեկնաբանել որպես հայկական կամ հայացնել։

Ցուցակի քննարկվող հատվածում ակնհայտ իրանական ծագում ունեն հետևյալ անձնանունները⁴⁷ Անուշաւան (Anōsarwan < anōs(a)- «անմահ» + rawān «հոգի», ՀԱՆԲ, 1, էջ 172)⁴⁸, Արբակ (Arbak, հուն. տառադարձություն՝ Ἀρβάκx, IN, էջ 20—21, ՀԱՆԲ, 1, էջ 270), Զաւան (Zavan < zavan- «կոշ, դիմում (աստծուն)» (?), IN, էջ 384, ՀԱՆԲ, 2, էջ 175—176), Փառնակ (Farnak, հուն. տառադարձությամբ Φαρνακx < farna- «երջանկություն, փառավորություն, պերճություն». սրա farr տարբերակից է ծագում հայ. փառ-ը, IN, էջ 92—93, ՀԱՆԲ, 5, էջ 191), Վաշտակ (Vaštak, հմմտ. ասորեստ. արձանագրություններում հիշատակված Vašdaku մեղական անձնանունը՝ va-xšta- «աճած» (?), IN, էջ 359)⁴⁹, Շաւարշ (*Šavarš, հուն. տառադարձությամբ Σαβαρς, Σαβαρς, հմմտ. ավեստ. (Syavaršan < syav- «սև» + aršan «արու, արու ձի, հովատակ» = «սևահովատակ, սև հովատակ ունեցող», IN, էջ 299—300, ՀԱՆԲ, 4, էջ 155), Վաւամ (Vistahm/Vistaxm < vista x m- «մեծագոր», IN, էջ 371—372, ՀԱՆԲ, 5, էջ 127), Փառնաւազ (Փառնուա) (Farnabazu, հուն. տառադարձությամբ Φαρναβζος < farna- «երջանկություն, փառավորություն, պերճություն» + bāzu- «թև, բազուկ» > հայ. բազուկ. հմմտ. Փառնակ), Փառնու (Փառնու, Փառնու) (*Farr- < farr- = farn(a)- «երջանկություն, փառավորություն, պերճություն». հմմտ. Փառնի և Փառնակ)⁵⁰, Արւանդ (Arvand, հուն. տառադարձությամբ՝ Ἀρβάνδης, Ἀρβάνδης, ալև. Ὀρόντας, Ὀρόντας < arvand «արագընթաց, քաջ», IN, էջ 89, ՀԱՆԲ, 2, էջ 145), Տիգրան (Tigrān(a), հուն. տառադարձությամբ՝ Τιγράνης, հմմտ.

⁴⁷ Բացի ՀԱՆԲ և IN հապավումներից, գործածվում է նաև ОИЯ հապավումը «Основы иранского языкознания» գրքի համար (М., 1979)։

⁴⁸ Յ. Յուստին (IN, էջ 17) բխեցնում է anōs + հայ. աւան բառերից, որ իրավամբ մերժում է Հ. Աճառյանը։

⁴⁹ Հ. Աճառյանը (ՀԱՆԲ, 5, էջ 37) բխեցնում է կամ հայ. վաշտ բառից, որ ամենայն հավանականությամբ, իրանական ծագում ունի, կամ պրսկ. vast «գեղեցիկ» բառին ցեղակից իրանական մի հին բառից։

⁵⁰ Հ. Աճառյանը (ՀԱՆԲ, 5, էջ 196) ընտրում է Փառն տարբերակը և առանց լրացուցիչ մեկնության հիշատակում միայն Մագիստրոսի «ուր Բառն Փառացի և պարսկականին բազմանի» բառերը։

ավեստ. *tiγri-* «նետ», *tiγra-* «սուր», IN, էջ 324—325, ՀԱՆԲ. օ, էջ 146—147. ըստ Աճառյանի՝ *tiγra-* «նետ» + *raṇa-* «կռվող, մարտնչող»՝ հապլուլո-գիայով *Tigrāna*. քիչ հավանական է):

Ամենայն հավանականությամբ իրանական ծագում ունեն նաև մի շարք այլ անձնանուններ, որոնց վերաբերյալ կարծիքները տարամիտվում են.

1. Հ. Աճառյանը հայերենով է ստուգաբանում Պարէտ (պարէտ «հսկիչ, վերակացու»), Սուր (սուր), Հաւանակ (հաւան-իլ), Ամպակ (ամպ+ակ), Աոնակ (աոն՝ այր-ի սեռականը+ակ); Պերն (պերն), Բագուկ (բագուկ), Պարոյր (պարոյր «շրջան, պտույտ»), պանոյն (պանոյն), Կոռնակ (կոռն+ակ) անձնանունները, բայց ավելի հավանական է սրանց իրանական ծագումը. ա) Աոնակ-ը և Բագուկ-ը ակնհայտ իրանական անուններ են. հմմտ. *Arnak*, հուն. տառադարձությամբ՝ Ἀρνάκης < *arna-* «կատաղի» (IN, էջ 27, ОИЯ, էջ 278) և *Bāzūk* < *bāzūk* «թեև, ուս, բագուկ, զորություն, իշխանություն» (որտեղից հայ. բագուկ)⁵¹. հավանական է նաև Հաւանակ անվան իրանական ծագումը. հմմտ. սկյութ. *Havanak* (հուն. տառադարձությամբ՝ Χαννακ) < *hvanak-* «հրավիրող»՝ *hvah-* «կանչել, հրավիրել» արմատից, ОИЯ, էջ 291. բ) Սուր և թերևս Կար անձնանունները Սուրէն և Կարէն անձնանունների հիմքային ձևերն են՝ առանց էն փոքրացուցիչ ածանցի. Սուր-ի համար հմմտ. ավեստ. *sūra-* «հերոս»՝ հ.-ե. **k'ūrō-*ից, որտեղից նաև թրակ. *Σοῦρα-* (*Σοῦρε-*, *Sure-*). այն հանդիպում է որպես իրան. անձնանունների երկրորդ բաղադրիչ՝ Ἀρτα-σῦρας, Τετα-σῦρας (սկյութ.). Կար-ի իրանական աղբյուրը կարող է լինել ինչպես ինքնուրույն անձնանուն (IN, էջ 156), այնպես էլ անձնանունների երկրորդ բաղադրիչ (IN, էջ 498). գ) Պարէտ, Պերն, Պարոյր, Պանոյն անձնանունների հիմքում դրվող հասարակ անունները ակնհայտ փոխառյալ բնույթ ունեն, և շատ հավանական է նրանց իրանական ծագումն ու անձնանվանական գործածությունը. Պարէտ-ը Յուստին (IN, էջ 242) համարում է իրանական աղբյուրից՝ նշելով հայ. պարէտ-ից իմաստով տարբեր, ավեստ. **paraeta-* = հ. հնդկ. *pareta-* («դրախտի») ուղին անցած, պաշտվող նախնի» բառերը. Պարոյր անվան հնարավոր պարոյր աղբյուրի հետ միասին նա հիշատակում է պրսկ. *parvar* «զգեստի երիզ» բառը, այսինքն՝ փաստորեն փորձում է ստուգաբանել վերջինս. այս կապակցությամբ նշենք, որ Գ. Ղափանցյանը Պարույրին նույնացնում է Հերոդոտի հիշած սկյութ Պրոտոթյուեսի հետ⁵², որ սեպագիր արձանագրություններում հիշվում է *Partatua* ձևով: Սակայն Ի. Մ. Դյակոնովը անընդունելի է համարում այս կարծիքը. նախ՝ Պարոյր-ը, որ պիտի ծագեր **Parōō* ձևից, դժվար է հանգեցնել հ. իրան. *Paratatava-*ին (>*Partatua*). երկրորդ՝ այդքան հին ժամանակների համար դժվար է ենթադրել պարթևական միջնորդությամբ հին ավանդույթի պահպանում՝ մինչև խորենացուն հասնելը. երրորդ՝ «եթե սկյութ Պարտատուայի վերաբերյալ ավանդությունը պահպան-

⁵¹ Bazuk անունով հայտնի է օսական մի առաջնորդ (I—II դդ.), բայց Աճառյանը (ՀԱՆԲ, I, էջ 301) առանց որևէ հիմքի նմանությունը պատահական է համարում: Հմմտ. նաև ОИЯ, էջ 284: Ի՞նչ կապ ունի իրան. և հայ. Աոնակ-ի հետ պիսիդ. Ἀρνάκις անձնանունը. հմմտ. L. Zgusta, նշվ. աշխ., էջ 95.

⁵² Г. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1948, стр. 150.

վել է իրենց իսկ հայերի մոտ, ապա հարկավոր է բացատրել, թե ինչպե՞ս է նրա անունը փոխարինվել նման, բայց այնուամենայնիվ ուրիշ և ավելի ուշ անունով⁵³։ մեղ ավելի հավանական է թվում ենթադրել, որ Խորենացին, հին հունական աղբյուրներում հանդիպելով Պրոտոթյունես անվանը, այն «հայացրել է»՝ փոխարինել մերձավոր անվամբ, այլ կերպ ասած՝ նկատի առնելով, որ հայերեն անունները հունարեն տառադարձվելիս ձևափոխվում են, նա կատարել է հակառակ (իր կարծիքով հավանական) ձևափոխությունը։ Դ) Ամպակ կամ Ամբակ անձնանվան ամպ (ամբ) + ալ մեկնաբանությունը քիչ հավանական է։ Թերևս ենթադրելի է հ. հնդկ. ambha- «ուծ, զորություն» բառին մերձավոր իրանական աղբյուրից ծագող ինչ-որ անձնանուն։

2) Թեև ժամանակակից հետազոտողների կողմից չեն ստուգաբանվում (կան հնից եկող՝ ոչ գիտական ստուգաբանություններ), այլև չկան համոզիչ իրանական զուգահեռներ, բայց որոշ կարգի հատկանիշների հիման վրա (բառասկզբնային հրա- < իրան. hra-/fra-, բառավերջային -ակ՝ առանց հայկական բառակազմական համապատասխան հիմքի) կարելի է իրանական ծագում վերագրել Հրաֆ (Հրաֆն. հիշտ չէ հուր + անդ)⁵⁴, Գրակ (Գրակ, Գրակ, համտ. հետագա Գլակ և Գզակ)⁵⁵ և Կայալակ անձնանուններին. սրանցից երկրորդին նման՝ հայ զորավար Γηάκιος-ի անունը (ըստ Պրոկոպիոսի) Ֆ. Յուստին (IN, էջ 115) մեկնում է որպես «գլխանցի», որ անհավանական է։ Այս կապակցությամբ նշենք, որ նույնիսկ Հրաչեայ անունը, որ լիովին հայկական է հնչում (հուր + աչ-եայ) և այդպես էլ մեկնաբանվում է Հ. Աճառյանի կողմից (ՀԱՆԲ, 3, էջ 109), կարող է իրանական աղբյուրից հասած (համտ. ավեստ. Fracya- անձնանունը)⁵⁶ և հայկական ժողովրդական ստուգաբանության ենթարկված լինել։ Ֆ. Յուստին ավելի հակված է երկու դեպքում էլ նմանությունը համարել պատահական և անձնանունը դիտել որպես «ալարողիական»։ Յուցակի երրորդ հատվածի անձնանուններից՝ 1) հայկական ծագում ունեն Նուրայր-ը (նուր + այր, IN, էջ 230, ՀԱՆԲ, 4, էջ 84), Ընծակ-ը (իճծ + ակ, ՀԱՆԲ, 2, էջ 239)⁵⁷, Հոյ-ը (հոյ- (ակապ), ՀԱՆԲ, 3, էջ 94, Ջարմայր-ը (զարմ «ցեղ, տոհմ» + այր, IN, էջ 383 կամ զարմ- «ղարմանալի» + այր, ՀԱՆԲ, 2, էջ 172, IN, էջ 172) և Արբուն-ը (արբուն «հասունություն, առույգություն, զորություն»)⁵⁸։ 2) հավանական է Գոռակ-ի և Յուսակ-ի հայկական ծագումը

⁵³ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 174, прим. 270:

⁵⁴ Ֆ. Յուստին (IN, էջ 40) հիշում է 'Αρχάνος ձևի տակ, որ սովորաբար համապատասխանեցվում է Երուանդ-ին։ Հրաֆ-ի համար այլ հետազոտողներ տալիս են 'Ορόντης, 'Ορόντας զուգահեռները։

⁵⁵ Եթե անվան բուն ձևը Գրակ է, ապա համտ. Guzak իգական և Chuzak ար. անձնանունները (IN, էջ 123)։

⁵⁶ F. Justi, IN, S. 131. F. Bartholomae, Altiranisches Wörterbuch, 1904 (2-րդ հրատ., 1961), S. 1012.

⁵⁷ Եթե նախ՝ իճծ-ի հ. հնդկ. simha- միակ զուգահեռը իրանական կորած կրկնակ չի ունեցել և երկրորդ՝ Ընծակ տարբերակը ավելի հին չէ։

⁵⁸ G. B. Jahukian, Armenische Miscellen, „Studia classica et orientalia Antonino Pagliaro oblata, Roma, 1969. p. 68: Հ. Աճառյանը (ՀԱՆԲ, 1, էջ 270) Արբուն-ը չի ստուգաբանում՝ հիշատակելով հենցից Մագիստրոսի արխ + բուն «բնականագոյն զորություն» ստուգաբանությունը։

(առաջինի համար հմմտ. նաև Գոռ անձնանունը՝ Գոռ «Հպարտ» բառից, ՀԱՆԲ, 1, էջ 488, երկրորդի համար՝ Յոյս և Յուսիկ). 3) Հայկակ-ը (Հայկակ և Միւս Հայկակ) կազմված է Հայկ-ից -ակ փոքրացուցիչ-փաղաքական ածանցով. 4) Հաւրոյ (Հաւրայ) անունը⁵⁹ ամենայն հավանականությամբ նույն ծագումն ունի, ինչ հայր բառի սեռականը (*pətr-os)՝ ծագելով *pətr- հիմքից (հմմտ. հուն. πατρ(ο)-ով կազմությունները և հայկ. հաւրայ «խորթ հայր» ձևը). Հաւրոյ, Նորայր, Զարմայր, Արբուն, Հոյ անձնանունները պետք է համարել հնագույն հայկական կազմություններ⁶⁰. 5) վերջապես Սկայորդի-ի սկայ-ը ամենայն հավանականությամբ կապված է թրակյան սկայ- ցեղանվան (Σκαίοι) հետ, թեև Գ. Ղափանցյանը այն բխեցնում է սակերի անունից⁶¹:

Մի քանի խոսք ուղիղ գծով իրար հաջորդող անձերի երկրորդական անունների և անուղղակի գծով ներկայացված անձերի անունների մասին. 1) Անուշավանի երկրորդական Սաւս անունը (Անուշաւանն Սաւսաւնուէր կամ, ըստ այլ ձեռագրի, Անուշաւանն որ Սաւս աւնուանիր) վերածվել է Սաւսաւնուէր-ի՝ կապ-վելով սաւս ծառանվան հետ. սկզբնապես այն կարող էր ինքնուրույն անուն լինել՝ թերևս թրակյան ծագման (հմմտ. Sausa անձնանունը)⁶². 2) Արայի կնոջ Նուարդ անունը ակնհայտ իրանական ծագում ունի, թեև բուն աղբյուրի հարցը տարակարծությունների տեղիք է տալիս. Յուստին (IN, էջ 230) համեմատում է պրսկ. navard «հաճելի, սիրելի», Աճառյանը (ՀԱՆԲ, 4, էջ 88)՝ պրսկ. navard «ընծա, պարգև» կամ, ավելի ճիշտ nav «նոր» + vard, «վարդ» բառերի հետ. 3) Հայկակի (ըստ այլ ձեռագրերի՝ Հայկի) թոռ Պասքամի անվան ծագումը հայտնի չէ (հմմտ. IN, էջ 245, ՀԱՆԲ, 3, էջ 228), բայց պարզ է նրա ոչ հայկական բնույթը. 4) Պասքամի որդի Տորքի անվան հայերեն մեկնությունը (իբրև Snurf <սուր-ֆ)⁶³ անհավանական է. սկսած Ն. Ադոնցից⁶⁴ հետազոտողներն այն համարում են փոքրասիական. հմմտ. խեթ. Tarḫuna-, լուվ. Tarḫund-, հիեբ. լուվ. Tarḫu(n)t-, լիվ. Trqqñt- (որոտի աստված). ամենից ավելի մոտ է հայերենին այս անվան թրակյան ձևը՝ Τορχος, Τορχουս անձնանունը⁶⁵:

Մեր խնդրից դուրս ենք համարում քննարկել Տիգրանի սերունդների թվարկման մեջ հանդիպող անձնանունները՝ Նշենք միայն, որ դրանք հիմնականում իրանական ծագում ունեն՝ Բաֆ, Տիրան, Վահագն, Ներսես, Զարեհ,

⁵⁹ Զ. Աճառյանը (ՀԱՆԲ, 3, էջ 111) համարում է «ծագումն անորոշ. խորենացու հնարած անուններից»:

⁶⁰ Եթե Զարմայր-ի աղբյուրը իրան. չէ՝ ձևափոխված հայերեն ժողովրդական ստուգաբանությամբ. Վ. Հինցը (W. Hinz, Altpersische Sprachgut der Nebenüberlieferungen, Wiesbaden, 1975, S. 277) արամեական Zmr և հիման վրա վերականգնում է մեղական Zarahmāra ձև, որի առաջին մասը համեմատում է ավեստ. zara- «նպատակ», երկրորդը՝ հ. հնդ. smārati «հիշում է, մտածում է» ձևերի հետ:

⁶¹ Գ. Բ. Զահեդյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 67: Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, էջ 222—223:

⁶² Գ. Բ. Զահեդյան, Նշվ. աշխ., էջ 75: Պարզ չէ Sausa-ի կապը Sausga դիցանվան հետ:

⁶³ Ս. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 259—283. Ն ու յ ն ի՝ Հայոց հին գրականության պատմություն, Ա, էջ 26:

⁶⁴ „Revue des études arméniennes“, VII, 1927, p. 185—194.

⁶⁵ Գ. Բ. Զահեդյան, Նշվ. աշխ., էջ 75:

Բագամ (?), Վահան (տարբերակ՝ Վան), Վահէ. ականատ է Առաւան և Արմոգ անունների ծագումը: Իրանական հիմք ունեն նաև Տիգրանի քրոջ Տիգրանուհի և կնոջ Զարուհի անունները:

Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել քննարկված նյութի հիման վրա.

1) Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքում թվարկված անձնանունները հիմնականում իրական են՝ առնված կամ գրավոր աղբյուրներից, կամ ժողովրդական ավանդություններից. եթե նույնիսկ կան անձնանուններ՝ ստեղծված Խորենացու կողմից, ապա դրանց համար օրինակ են ծառայել հայ ժողովրդանուններն ու տոհմանունները: Այս առումով ճիշտ չեն «հնարովի», «սարքովի», «կեղծիք» որակումները, որ տալիս են հետազոտողները. նույնիսկ այնպիսի ականավոր լեզվաբանը, ինչպիսին է Հ. Աճառյանը, «Հայոց անձնանունների բառարանում» հաճախակի կրկնում է «Խորենացու հնարած անուններից» արտահայտությունը: Առավել ևս անհանդուրժելի են XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին տասնամյակներին մի շարք հեղինակների Խորենացու գործածած հատուկ անունների չխորացված քննության փորձերը: Այսպես, Ա. Մ. Գարագաշյանի կարծիքով՝ «բավական մեծ առարկություն է արդարև, թե ինչպես հայ նահապետաց անվանք, որ մինչև Արա (բացի Հայկայն, զոր ազգային ավանդությունն, անկախ ի Խորենացվուն պատմութենե, դեթ իբրև հսկա կճանչնար) հայ լեզվին բոլորովին օտար և անծանոթ բառեր են՝ հետ Արայի լինին կարգավ հայեցի անուններ, արմատով և կազմովյալմբ ծանոթ և ընտանի»⁶⁶: Գարագաշյանն իբրև «հայեցի» է որակում «Անուշաւան, Պերճ, Բազուկ, Սկայորդի, Հրաչեայ և սոցին նման հայերեն անվանք»⁶⁷, որոնք ինչպես երևաց մեր բերած փաստերից, բացի-ճրդի բաղադրիչից և հայացված Հրաչեայ-ից, օտար, հատկապես իրանական ծագում ունեն: Բասմաջյանն ընտրում է քննադատության մի այլ ուղի. անձնանունների աղբյուրն է համարում կամ որոշ պատահական զուգահեռներ, կամ անուններ, որոնք հավասարապես կարող էին հատուկ լինել և՛ հայերին, և՛ այլ ժողովուրդների (օրինակ՝ վրացիներին)⁶⁸. այսպես, Արբակ, Փառնաս (տարբերակ՝ Փառնակ), Սուր, Առնակ անունները նա բխեցնում է վրացական Արբակ, Փառնավագ, Սայուրմակ (հայ. Սուրմակ), Արտակ անուններից, Բազուկ-ը՝ օս. Բազուկ-ից՝ առանց մտածելու, որ հայերը և վրացիները իրարից անկախ կարող էին կրել միատեսակ իրանական անուններ, և որ դրանք կարող էին որոշ դեպքերում համընկնել իրանական ծագում ունեցող օսերի անձնանունների հետ. էլ չենք խոսում այն մասին, որ Առնակ-ը և Արտակ-ը միանգամայն տարբեր անուններ են: Միայն նմանահնչության վրա հենվող զուգահեռներ է անցկացնում Կ. Բասմաջյանը հայ. Արամ և աստվածաշնչային Արամ (Սեմի այն որդու անունը, որ համարվում է արամեացիների նախահայրը)⁶⁹, հայ. Արա և աստվածաշնչային Արա, հայ. Սուր

⁶⁶ Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, Ա, Կ. Պոլիս, 1885 (Թիֆլիս, 1895, էջ 145):

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Կ. Բասմաջյան, Իսկական պատմություն հայոց, էջ 84—85:

⁶⁹ Ծիլոտ է, հին հեղինակները արմենների անունները հաճախ են շփոթում (հմմտ., օրինակ, «Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան», Երևան, 1940, էջ 8—9), բայց Բասմաջյանն այդ մասին ոչինչ չի ասում:

և Քաշմիրի թագավորի Սուր անձնանունների միջև, Եթե հայ և արմեն անվանումները հնդեվրոպական ծագում ունեն, որ հավանական է, ապա Գարա-գաշյանի կարծիքը Հայկի հաջորդների անունները՝ «օտար» և ոչ «հայեցի» լինելու մասին ճիշտ չպետք է համարել:

2) Ինչպես ցույց տրվեց, հորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունները ըստ ժամանակագրական հաջորդականության բաժանվում են երեք անհավասար խմբի՝ 1) աստվածաշնչային (1—4), 2) էպոնիմա-ալանդուսային (5—13) և 3) իրանական ու հայկական աղբյուրներով անմիջաբար մեկնաբանվող. վերջիններիս մեջ այնուամենայնիվ գերակշռում են իրանական ծագման անունները. 37 անուններից շուրջ երկուսուկես տասնյակը հավաստի կամ հնարավոր իրանական ծագում ունի. կեսից ավելին են իրանական ծագում ունեցողները նաև ուղիղ գծով չհաջորդող անձերի անունների մեջ. ինչ վերաբերում է Տիգրանի սերունդների թվարկման մեջ հանդիպող անձնանուններին, ապա դրանք գերակշռող մեծամասնությամբ իրանական են:

3) Իրանական և հայկական ծագում չունեցող անունների մեջ կարելի է նշել ուրարտական, թրակյան, փոքրասիական և, բացի աստվածաշնչային անուններից, թերևս սեմական այլ անուններ, թեև դրանք մասամբ խառնված են բուն հայկական ժողովրդանունների ու բառերի հետ և ներկայացված զղալի ձևափոխությամբ՝ Արամ, Արամենակ (Արամանեակ), Ար(ա)մայիս, Հարմա (?), Արա, Սաւս, Սկայ(որդի), Տորֆ, Կադմոս, Կարդոս և այլն: Հնարավոր է նույնիսկ, որ ակնհայտ հայկական և իրանական կերպարանք ունեցող անուններ՝ մեջ լինեն նաև ժողովրդական ստուգաբանությամբ ձևափոխված կամ խառնուրդի (կոնտամինացիայի) ենթարկված անուններ. այսպես, թերևս հնարավոր է իրանական ծագման Մանաազ անվան մեջ որպես սկզբնական հիմք տեսնել ուրարտ. Mennaše-ն⁷⁰:

4) Բուն հայկական ծագում ունեցող անձնանունները երկու կարգի են՝ հայերենի տվյալներով անմիջապես ստուգաբանվող (Նորայր, Բնձակ (?), Զարմայր, Արբուն և այլն) կամ արդեն մթազնված՝ հնդեվրոպական ծագումով (Հոյ, Հաւոյ և այլն):

5) Իրանական ծագման անձնանունները միատարր չեն և թերևս գալիս են տարբեր, հատկապես մեդական (մարական), պարթևական աղբյուրներից. այս է պատճառը, որ միևնույն իրանական արմատը երբեմն այդ անունների մեջ հանդես է գալիս բարբառային տարբեր ձևերով. հմմտ. farh- (Փառնակ, Փառնավազ) և far- (Փառոխ, Փառոս ?): Հնարավոր է, որ մի շարք դեպքերում հայկական անձնանունները ոչ թե անմիջաբար փոխ առնված լինեն իրանական աղբյուրներից, այլ կազմված լինեն հայկական հողի վրա՝ իրանական լեզուներից փոխ առնված հասարակ անունների հիման վրա՝ Պերճ, Պանոյն և այլն: Կան դեպքեր էլ, երբ իրանական ծագման անձնանունները լիովին հայացվել են՝ Սուր, Առնակ, Հրաշեայ և այլն:

6) հորենացու «Հայոց պատմության» առաջին գրքում հիշատակված անձնանունների պատմական ճակատագիրը տարբեր է եղել: Դրանք մասամբ գործածված են միայն հորենացու մոտ և այլուր չեն հանդիպում (Ամասիայ,

⁷⁰ Հմմտ. Կ. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 57:

Հարմայ, Արբակ, Սուր, Գոռակ, Կալպակ, Կոռնակ⁷¹, Պանոյն և այլն), մասամբ հանդիպում են հնում, բայց հետագայում դադարել են գործածվելուց (Փառոխ, Վստամ, Գղակ և այլն), մասամբ հնում չեն գործածվել կամ սակավ են գործածվել, բայց հետագայում վերականգնացվել են և այժմ էլ գործածական անուններ են (հատկապես չպոնիմ-ավանդութային անունները՝ Հայկ, Արամ, Ար(ա)մայիս, Գեղամ, այլև Նորայր, Հրանտ, Պերն, Պարոյր, Հրաչեայ և այլն), մասամբ էլ թե՛ հնում, թե՛ այժմ գործածական անուններ են (Շաարշ, Տիգրան և այլն)։ Ընդհանուր առմամբ Խորենացու հեղինակության մեջ և սրա հետ զուգորդված աղբյուրների ավանդույթների ուժեղացմամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքում հանդիպող անձնանունների գրեթե կեսը այժմ էլ գործածական է՝ Հաբեթ, Թորգոմ, Հայկ, Արմենակ (և Արմեն), Արամայիս, Գեղամ, Արամ, Արա, Անուշավան, Պարես (սակավադեպ), Շավարշ, Նորայր, Հրանտ, Ընձակ, Զարմայր, Պերն, Պարոյր, Հրաչիս, Երվանդ, Տիգրան, այլև Յոլակ, Դառնիկ, Մանավազ, Սոս, Տարֆ, Նվարդ, Զարուհի, Տիգրանուհի՝ չհաշված Տիգրանի սերունդների թվարկման մեջ հանդիպող Տիրան, Վահագն, Ներսեն, Զարեն, Վահան, Վահե անձնանունները։

ЯЗЫКОВЫЕ ИСТОЧНИКИ ЛИЧНЫХ ИМЕН
ПЕРВОЙ КНИГИ «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

Академик АН Армянской ССР Г. Б. ДЖАУКЯН

(Резюме)

В первой книге своей «Истории Армении» Мовсес Хоренаци дает генеалогию армянских царей в списке, включающем 50 имен, от Яфета, сына Ноя, и до Тиграна Ервандеан. По характеру имен список распадается на три неравномерные части. Первые 4 имени имеют библейский характер—их источником служили Библия и комментарии к ней. Имена царей с 5-го по 13-е, а также их потомков по побочной линии основаны главным образом на преданиях и греческих письменных источниках. Ими Хоренаци и другие историки обычно этимологизируют различные этнонимы и топонимы, в том числе самоназвание армян haу (ср. Наук, эпоним армян) и название агмен, данное армянам другими народами (ср. Агапанеак, Агамайис, Агам). Третья, наиболее странная часть списка включает главным образом исконно армянские имена и заимствованные из иранского. Во второй и третьей частях встречаются также имена урартского, фракийского, малоазийского происхождения. На основании проведенного анализа отвергается мнение о выдуманности имен списка, бытующее у многих исследователей второй половины XIX—начала XX вв. и еще не полностью преодоленное современными исследователями. В конце статьи определяется роль списка в формировании армянской антропонимики.

⁷¹ Նրանից տարբեր է Կոռնակ, որ ոմանք գրում են Կոռնակ։